[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Մայիս	2019 թ.		Բ	6925580425
[4] Մատուցման ամսաթիվը					
13	Մայիս	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	4	3	8	4	6		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ՊՈԼԻԳԼՈՏՆԵՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ				N 1150003694504546					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻԼՅԱՆ Փ. 11 83 տ.									
[13] Լրացուցիչ տվյալներ	Ծառայությունների մատուցման վայրը (հասցեն) ՀՀ ք. Երևան, Կիլյան փ. 11 83տ.									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն				N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 17103918 քրեական գործի թարգմանություն, ռուսերեն-հայերեն	էջ	434	2300		998200
2	Թիվ 50100818 քրեական գործի թարգմանություն, ռուսերեն-հայերեն	էջ	131	2300		301300
Ընդամենը						1299500

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ OHANYAN INNA 5461570325

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

13/05/2019 12:40:54

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

10-ը հունվարի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Լ.Ադամյանս, վերանայելով վարույթիս թիվ 17103918 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

07.03.2018թ. Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեում 08.04.2010թ. ԲՀ քրեական օրենսգրքի 209-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցված թիվ 10011060984 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Անդրանիկ Լևոնի Համբարձումյանի, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, ընդունվել վարույթ և քրեական գործին շնորհվել է 17103918 համարը:

14.03.2018թ. քրեական գործը՝ բաղկացած 5 հատորից, ռուսերեն լեզվից հայերեն լեզվով թարգմանելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ:

ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան աշխատակիցը հեռախոսազանգի միջոցով տեղեկացրեց, որ թիվ 17103918 քրեական գործի նյութերի թարգմանությունը հանձնարարվել է Գագիկ Շիրմազանյանին, Լիլիթ Խաչատրյանին, Տաթևիկ Քոչարյանին, Հասմիկ Սարգսյանին և Արմինե Ալեքսանյանին, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկվել է հիշյալ անձանց վերաբերյալ փաստաթղթերը, համաձայն որոնց՝ վերջիններս ունեն ռուսերեն լեզվի թարգմանչի որակավորում:

Նկատի ունենալով, որ Գագիկ Շիրմազանյանը, Լիլիթ Խաչատրյանը, Թաթևիկ Քոչարյանը, Հասմիկ Սարգսյանը և Արմինե Ալեքսանյանը ունեն ռուսերեն լեզվի թարգմանչի որոկավորում, գործի ելքով շահագրգռված անձ չեն հանդիսանում, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 17103918 քրեական գործով Գագիկ Շիրմազանյանին, Լիլիթ Խաչատրյանին, Տաթևիկ Քոչարյանին, Հասմիկ Սարգսյանին և Արմինե Ալեքսանյանին ճանաչել թարգմանիչ՝ նրանց պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Լ.Ադամյան**

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

31.01.2019թ. ք. Սևան

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական Վ. Հակոբյանս, քննարկելով թիվ 50100818 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

29.09.2016թ. Ռուսաստանի Դաշնության Նիժնեսերգինսկիի շրջանի ոստիկանությունում ՌԴ քրեական օրենգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 160483141 քրեական գործն այն դեպքի առթիվ, որ Նվեր Պարգևի Հակոբյանը, խախտելով ՌԴ Սահմանադրության 58-րդ հոդվածն այն մասին, որ յուրաքանչյուր անձ պարտավոր է պահպանել բնությունը և շրջակա միջավայրը, խնայողաբար վերաբերվել բնության բարիքներին, հաստատապես իմանալով, որ ծառահատումներ իրականացնելու համար անհրաժեշտ է համապատասխան թույլտվություն, չունենալով այն և ապօրինի հարստանալու նպատակով, 2016թ. օգոստոսի 20-ից 30-ն ընկած ժամանակահատվածում ,,Նիժնեսեգինսկի'' անտառտնտեսությունից բենզասղոցի միջոցով ապօրինի հատել է 6 հատ եղևնի տեսակի ծառ՝ դադարեցնելով դրանց հետագա աճը:

Այնուհետև Ն.Հակոբյանը, շարունակելով իր հանցավոր մտադրությունը նույն ժամանակահատվածում, նույն տեղից, նույն եղանակով ապօրինի հատել է ընդհանուրը՝ 74,534մ³ 58 հատ ,,եղևնի,, տեսակի, 1,961մ³ 3 հատ ,,յոլ,, տեսակի և ընդհանուրը 0,687մ³ 1հատ ,,կեչի,, տեսակի ծառեր:

Ն.Հակոբյանի հանցավոր գործունեության հետևանքով ՌԴ անտառային ֆոնդին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի 874.400 ՌԴ ռուբլի նյութական վնաս:

Վերոգրյալի հիման վրա 07.10.2016թ. Ն.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՌԴ քրեական օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասով և որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

12.12.2016թ. մեղադրյալ Ն.Հակոբյանի նկատմանբ հայտարարվել է հետախուզում:

20.02.2017թ. իրավական օգնության հարցում է ուղարկվել ՀՀ պատկան մարմիններին, պարզվել է, որ Ն.Հակոբյանը հաշվառված է Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Նաիրյան փողոցի 170 շենքի 19 բնակարանում, փաստացի բնակվում է Ք.Սևան, Խաղաղության փողոց, 4-րդ շենք, 5-րդ բնակարանում:

12.02.2018 թ-ին թիվ 160483141 քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացվել է մինչև 07.07.2018թ-ը:

Թիվ 160483141 քրեական գործը ՌԴ գլխավոր դատախազության միջոցով ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ-ում նախաքննությունը շարունակելու և քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ:

Պարզվել է, որ Ն.Հակոբյանի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասին:

18.05.2018թ-ին թիվ 160483141 քրեական գործը ստացվել է ՀՀ ՔԿ Սևանի քննչական բաժին, իմ կողմից ընդունվել է վարույթ, գործին շնորհվել է թիվ 50100818 համարը և ձեռնարկվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է թիվ 50100818 քրեական գործի ՌԴ իրավասու մարմնից ստացված նյութերը , բաղկացած երեք հատորից, ռուսերեն լեզվից թարգմանել հայերեն լեզվով՝ հետագայում քրեական գործով Նվեր Պարգևի Հակոբյանի հետ անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողություններ կատարելու նպատակով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 50100818 քրեական գործով <<Պոլիգոտներ>> ՍՊԸ-ի թարգմանիչներ Տաթևիկ Քոչարյանին, Հասմիկ Մարգարյանին և Լիլիթ Խաչատրյանին ներգրավել որպես թարգմանիչ՝ հայտնելով նրանց որոշման մասին՝ տրամադրելով որոշման մեկ օրինակը և պարզաբանելով թարգմանչի իրավունքները և պարտականություններ:

Քննիչ՝ _____ Վ. Հակոբյան

Սույն որոշումն ինձ հայտնված է՝

Տաթևիկ Քոչարյան՝ . << >>_____201 թ.

Հասմիկ Մարգարյան՝ . << >>_____201 թ

Լիլիթ Խաչատրյան՝ . << >>_____201 թ

Միաժամանակ ինձ բացատրվել է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածի համաձայն .

Թարգմանիչն իրավունք ունի՝

1) թարգմանությունը ճշգրտելու համար հարցեր տալ թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.

2) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության ճշտությունների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

3) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

7. Թարգմանիչն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել թարգմանչի՝ իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին.

4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճշտորեն և ժամանակին.

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

7) դատական նիստի ընթացքում պահպանել կարգուկանոն.

8) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և

ճշտությունը, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

9) առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

5. Թարգմանչի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Թարգմանիչներ՝ Տաթևիկ Քոչարյանը, Հասմիկ Մարգարյանը և Լիլիթ Խաչատրյանը նախազգուշացվել են << քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Տաթևիկ Քոչարյան՝ _____

Հասմիկ Մարգարյան՝ _____

Լիլիթ Խաչատրյան՝ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ ՍՏԱՑԱ

Տաթևիկ Քոչարյան՝ _____ << >> _____ 201 թ

Հասմիկ Մարգարյան՝ _____ << >> _____ 201 թ

Լիլիթ Խաչատրյան՝ _____ << >> _____ 201 թ

Քննիչ՝ _____ **Վ.Հակոբյան**